կատարում, դա շատ զարմացնում էր ինձ: Ի՞նչ նպատակ ունէին այդ կերպարանափոխութիւնները, ի՞նչ կապ կար Արթինի, Ասլանի կամ միւսների մէջ եւ. վերջապէս, ո՞ւմն էին պատկանում ջորիները, այդ բոլոր խաբուսիկ պատրանքները զբաղեցնում, շոարեցնում էին իմ միտքը եւ զանազան անորոշ ենթադրութիւնների մէջ էին նետում...

Մուրա՛դ եւ քաւոր Պետրո՛ս, այդ երկու անունները սարսափեցնում էին ինձ: Այո՛, երկուսն էլ երեւելի խաչագող էին: Միթէ՞ բարոյապէս փչացած խաչագողը կարող էր ընդունակ լինել մի լաւ գործի: Միթէ՞ կարելի էր հաւատալ նրանց: Միթէ՞ կարելի էր յուսալ նրանց մէջ անկեղծութիւն, որ իրանց ամբողջ կեանքում միշտ կեղծել են, միշտ խաբել են եւ միշտ իրանց հեռու են պահել ճշմարտութիւնից: Գարշելի՛ արարածներ: Ես զարմանում էի Ասլանի միամտութեան վրայ, որ այդ տեսակ մարդկանց հետ գործ ունէր: Ի՞նչ մի լաւ բան կարելի էր սպասել նրանցից:

Բայց երբ կրկին անգամ ներկայանում էր ինձ այն սրտաշարժ տեսարանը, որ մի քանի րոպէ առաջ տեղի ունեցաւ տաղաւարի մէջ, երբ մտաբերում էի այն խօսքերը, որ այնքան խորին զգացմունքով արտասանեց Մուրադը, այդ միջոցին մթութիւնները հետզհետէ փարատւում էին, եւ իմ առջեւ բացւում էր մի նոր, լուսափայլ հորիզոն: Ես տեսնում էի, որ գարշելի խաչագողն անգամ կարող է ուղղուել, կարող է մաքրուել էին կեղտերից եւ ծառայել մի բարի գործի: «ովքե՞ր էինք մենք, ասում էր ոգելից Մուրադը: «Մենք մի հասարակութիւն էինք: Մեր մէջ կերպարանագործուած էր մի ամբողջ ժողովուրդ իր անբարոյական ախտերով»... Դրանք խորհրդաւոր, շատ խորհրդաւոր խօսքեր էին: Միթէ՞ սալմաստեցին կամ սաւրեցին է միայն խաչագողը: Խաչագող կարող է լինել ե՛ւ մի քահանայ ե՛ւ մի արհեստաւոր, ե՛ւ մի վաճառական, ե՛ւ մի վարժապետ, ե՛ւ մի աստիճանաւոր, մի խօսքով, ամէն մարդ, որ խաչագողի յատկութիւններ ունի: Խաչագող կարող է լինել եւ մի ամբողջ ազգ, որ բարոյապէս փչացած է, որը խաչագողի նման հարուստ ընդունակութիւններ ունի, բայց իր ընդունակութիւնները գործ է դնում դէպի վատը, դէպի անազնիւը եւ դէպի անբարոյականը: «հասաւ ժամանակը մերկանալ հին մարդը եւ, իբրեւ նոր մարդ, նոր հոգով եւ նոր եռանդով գործել՝ դէպի ազնիւը եւ դէպի լաւը: Այդ խօսքերով վերջացրեց երիտասարդը իր փոքրիկ ճառը. «մեր բոլոր ընդունակութիւնները, որ զարգացած էին միայն չարիք գործելու համար, թող այսուհետեւ գործ դրուին դէպի հասարակաց բարին»:

Երբ Մուրադը վերջացնելով իր գործը եկաւ նստեց իմ մօտ, ես չյիշեցի, որ մի ժամանակ տեսել եմ նրան արաբական մինարեթում: Ես տարակոյս չունէի, որ նա ճանաչում է ինձ: Բայց, երեւի, մտածում էր, որ ես այժմ չէի կա-